Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Գլխաւոր Կարգադիր Յանձնաժողովի միջոցով ստացուած՝ Խարբինից, պ. Գրձելեանից յօգուտ հայ կամաւորների 165 ռուբլի, Կերչի քաղաքապետից յօգուտ գաղթականաց — 2015 ռուբլի և Սրմաւրի Հայոց Բարեգործական Ընկերութիւնից 400 ռուբլի (որից 200 ռուբլին յօգուտ գաղթականաց, իսկ 200 ռուբլին յօգուտ որբ երեխաների ապաստարանին), պատուիրելով մուծել մտից մասեան առանձին-առանձին և իւրաքանչիւրին առանձին անդորրագիր ուղարկել։ 30 մայիսի, թ. 942։

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Կոնդակ Մակուի Տ. Արսէն քահանայի անունով, որով, Ատրպատականի թեմական Առաջնորդի միջնորդութեան համաձայն, քահանայական լանջախաչ կրելու իրաւունք տրուեց։ 2 մայիսի, թ. 779։

ԿԱՂՈՒԱԾՆԵՐ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐԵՐԻՑ.

Սինօդը՝ լսելով Վրաստանի Կոնսիստորիայի 1914 թ. մարտի 12-ի, թ. 1254 յայտարարութիւնը — 1913 թ. վիճակային և օտարին արդեանց մատեանների գնութեան մասին՝ որոշեց. պատուիրել Վրաստանի և Իմերեթի Կոնսիստորիային նախ՝ անմիջապէս փոխադրել Սինօդ թէ 1913 թ. և թէ 1914 թ. վիճակային արդեանց ցնացորդները, երկրորդ՝ ստանալ Տփխիսի եկեղեցիների հոգաբարձութիւնից Տ. Մեսրոպ եպիսկոպոսի ընդունելութեան համար փոխարինաբար վճարած յիսուն (50) ռուբլին և մուտք գրել 1915 թ. մատեանում. երրորդ՝ անմիջապէս ուղարկել Տպարանի Վարչութեան տպարանական բոլոր գումարները. չորրորդ՝ ճշտութեամբ կատարել Սինօդի 1911 թ.